

Հր. Մուրադյան

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ «ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ»

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Գրական Թանգարանի Աբովյանի ֆոնդերում հաշվվում է մոտ 250 մամուլ ձեռագիր ժառանգություն։ Այդ ժառանգության մեջ կարելի է գտնել գրական երկի բոլոր տեսակները, երկեր ամենաբազմազան հարցերի մասին, զբաղված ամենատարբեր գրական սեռերով։

Իր հանրահայտ «Վերք Հայաստանի» վեպի, «Նախաշավիղի», առակների գրքի, պատմվածքների, պիեսների, բայաթիների, ընթերցողներին միայն վերջին տասնամյակում հայտնի դարձած բազմաթիվ երկերի՝ «Պատմություն Տիգրանի» մանկավարժական վեպի, «Ամերիկու լիս քցիլը» գիտա-գեղարվեստական երկի, պատանիների համար կազմած զրույցների գրքի, Հոմերոսից, Պետրարքից, Դանտեից, Գյոթեից, Շիլլերից, Կարամզինից և ուրիշներից կատարած մի շարք թարգմանությունների հետ միասին, Աբովյանի գրական մեծահարուստ ժառանգության մեջ կան ամենաբազմազան բնույթի բանաստեղծություններ, այդ թվում «Աղասու խաղը» ծավալուն շափածո երկը, ապա հեղինակի դրապատյան օրագրերը, բազմաթիվ չողվածներ, ուսումնասիրություններ, ուղեգրություններ, ճառեր, հարուստ նամականի և այլն։

Առանց չափազանցության կարելի է ասել, որ Աբովյանը գրել է գրական բոլոր ժանրերով, հարստացնելով հայ գրականությունը գրական երկի այնպիսի տեսակներով՝ որոնք մինչև վերջերս էլ իրենց տեսակի մեջ մնում են իբրև բացառիկ երևույթներ։ Այդպիսին է Աբովյանի «Պատմություն Տիգրանի» կամ բարոյական խրատներ հայ մանուկների համար» մանկավարժական վեպը, այդպիսին է նաև «Ամերիկու լիս քցիլը» պատմա-աշխարհագրական ակնարկը։

Աբովյանը որպես նորարար է հանդես գալիս նաև ֆուկլորի և ազգագրության ասպարեզում։ Թե մեկը և թե մյուսը Աբովյանին զբաղեցնում էին իբրև գրական ստեղծագործության համար անհրաժեշտ և կարևոր նախադրյալների։ Աբովյանը առաջինն էր հայ իրականության մեջ, որ խորապես գիտակցեց ժողովրդական կյանքի, խոսք ու զրույցի, առակի և առածի նշանակությունը գրողի և գրականության համար։ Աբովյանի այդ գիտակցությունը ոչ թե պատահական մոմենտ էր նրա մոտ, այլ նրա լուսավորչական դեմոկրատական աշխարհայացքի բնորոշ արտահայտություններից մեկը։ Աբովյանի աշխարհայացքի և դրան ղուգահեռ գրական ստեղծագործության զարգացումը սկիզբ առնելով գրքից և գրքայնությունից՝ ընթացել է դեպի կյանքը, դեպի ժողովրդական հոծ զանգվածների՝ իր խոսքով ասած «հարիր հազարի» կյանքի վերարտադրումը, նրանց խոհների և հույզերի, վշտերի և ուրախությունների, կարիքների ու երազանքների արտացոլումը։ Բնորոշ է այդ տեսակետից Աբովյանի պոեզիայի անցած ճանապարհը։

Արտվյալները գրականության մեջ մուտք է գործել նախ իբրև պոետ և նրա նախագործության, ինչպես նաև գորպայության տարիների ստեղծագործությունները քննադատելով թեմատիկ իմաստով գերազանցապես սուբեկտիվիստական բնույթ ունեն և արված են գրաքար լեզվով: Իբրև ստեղծագործողի այդ շրջանում գեղեցիկ են Արտվյալների աշխարհը նկարագրող շրջանակները, ժողովրդական կյանքի ու մտածողության, ինչպես և ժողովրդական արվեստի առանձնահատուկ գծերը համարյա դեռևս մուտք չեն գործում Արտվյալների ստեղծագործության մեջ: Բայց ահա հետգորպայության շրջանում, 40-ական թվականների սկզբին արդեն Արտվյալների պոեզիան, ինչպես և նրա ողջ ստեղծագործությունները, խորը բեկում է ապրում: Արտվյալների «Պարապ վախտի խաղալիք» առակների գիրքը և բայաթիների շարքը՝ հանդիսանալով հայ պոեզիայի և առակագրության խոշորագույն նվաճումներից, միաժամանակ մուտք են գրականության մեջ ժողովրդային սկզբունքների փայլուն կիրառման օրինակներ:

Այս բոլորի նշանակությունը անշուշտ չսփռված մեծ է հայ գրականության համար: Սակայն եթե մինչև օրս էլ Արտվյալներ այնուամենայնիվ առավելապես ճանաչվում է որպես «Վերք Հայաստանի» հեղինակ, դրա պատճառն այն չէ, որ նրա մյուս երկերը առանձին արժեք չեն ներկայացնում, այլ այն, որ «Վերք Հայաստանի» վեպը շատ է մեծ ու նշանակալից:

«Վերք Հայաստանի» իր ժամանակի ամենատաքսովոր իդեաներ տրուահայտող ամենաակտուալ քաղաքական երկն էր: Սակայն նախքան անդրադառնալը «Վերք Հայաստանի» վեպի արժանքած՝ պատմական մեծագույն նշանակություն ունեցող քաղաքական հարցերին, տեսներ թե գրական-կուլտուրական ինչպիսի գեր ունեցավ այդ երկը:

Մտածելով իր ժողովրդի կյանքի վերափոխման մեծ էությունները արժանի մի գործ ստեղծելու մասին, Արտվյալներ անմիջապես բախվում է այն ժամանակվա հայ իրականության ամենադժուր խնդրին, որ պատմելի պես կանգնում է նրա ճանապարհին, սպառնում խափանել նրա ծրագիրը: Ժամանակի գրական կուլտուրական կյանքի ամենադժուր խնդիրը դա գրադար լեզվի տիրապետությունն էր, որը իբրև տրագիկոս շարունակում էր իր իշխանությունը, թեև դարեր ատառ արդեն այն պաղարկել էր կենդանի լեզու լինելուց, մնալով իբրև գրքի լեզու: Իրարար լեզուն իր կուլտուրական պատմական խոշորագույն գերը կատարելուց հետո, վաղուց ի վեր դարձել էր հայ ժողովրդի կուլտուրական անաղթելի արգելափակ խոչընդոտ: Ժողովրդի կենդանի խոսակցական լեզուն պետք չէր մտել պատմական իր իրավունքի մեջ, ժամանակի գրողներն ու գիտնականները պետք էին դարձնում նրանից: Այլ խոսքով ստեղծվել էր մի անանցանելի անջրպետ հայ ժողովրդի և այն ժամանակվա հայ կուլտուրայի միջև: Այդ գրականությունը և կուլտուրան հակաժողովրդական էր թե՛ բառ և թե՛ բան: Բովանդակության: Այս դժբախտ իրավիճակը հետ կապված, Արտվյալներ մի անօրինակ ծանր ողբերգություն է ապրում, հույս ամբողջ գործնաժամը բարձրվում, որ գրականության կողմից աշխարհ է արված մոլորություն ու նրա կյանքը:

«Ինչ կա եկեղեցու վրա յա, տառնու ու սրբերի», — գրում է Արտվյալներ «Վերք Հայաստանի» վեպի առաջարանում: Նա պանդանում է մոտ, մատչելի ու հարազատ լինել միայն ժողովրդին, ծառայել «ազգին», իսկ ազգը Արտվյալների համար «հարկը հազարն» էր: «Իրարար տուր կլի, որ հասկանային, բայց հարկը հազարի համար թեկուզ իմ գրածը, թեկուզ մեկ քամու քաղաք»:

Հանդես բերելով մի աննախընթաց պատմական խորաթափանցություն, մեր ժողովրդի կուտուրական զարգացման օրինաչափությունն ըմբռնելու մի զարմանալի կարողություն, միաժամանակ տեսնելով խոր հակասություն իր հայացքների և իրականության միջև, նա չէր կարող չնախազգալ իր դեմ հարուցվելիք խոչընդոտները և դրա հետ կապված ծանրագույն հոգեկան ցնցումներ շունչնալ:

«Ոչ քսան-երեսուն տարուց ավելի ա՛մ իմ ազիզ հեր, իմ սիրելի ազդ, — որ սիրտս կրակ ա ընկել, էրվում, փոթոթվում ա, գիշեր, ցերեկ լացն ու սուքը իմ աչքիցս, ախն ու օխը իմ բերնիցս չի պակասում, այ իմ արյունակից բարեկամք, որ մեկ միտքս ու մուրազս ձեզ պատմեի ու հետո հողը մտնեի»։ «Բայց ախ՛ լեզուս փակ էր, աչքս բաց, բերանս բռնած, սիրտս խոր, ձենս պակաս, լիզուս կարճ, գանձ շունքի, որ գործով ցույց տայի ուզածս, անունս մեծ չէր՝ որ ասածս տեղ հասնի, մեր գրքերն էլ գրաբար, մեր նոր լեզուն էլ անպատիլ, որ սրտիս հասրաթը խոսքով հայտնի»։

Աբովյանը իշխանավոր չէր և ոչ էլ հարուստ մեծատուն, սակայն նրան տրված էր խոսքով իր սրտի հասրաթն հայտնելու մի հզոր կարողություն, արվեստագետի շողշողուն տաղանդ։ Բայց հենց այստեղից էլ սկսվում է նրա ուլերբոությունը։ «Ես էլ էի ուզում՝ որ ինձ վրա չծիծաղեն, շասեն կոպիտ ա, հիմար ա, որ քերականություն, ճարտասանություն, տրամաբանություն չգիտի, ևս էլ էի ուզում, որ ասեն. «ո՛հ, էնպես խորը, խրթին շարադրել գիտի, որ սատանան էլ միջիցը մեկ բառ չի կարող իմանալ, հասկանալ...»։

Աբովյանը կանգնում է ծանր երկընտրանքի առաջ. գրել աշխարհաբար, ժողովրդին հասկանալի լեզվով, «որ մեր խալխի սրտովը ըլնի», զոհել անուն, փառք, ծաղրվել ու արհամարհվել, թե՛ հրաժարվել ժողովրդից, երես դարձնել նրա շահերից, գրել գրաբար, մեծարվել և փառքի տիրանալ։ «Էսպես բաները մտածելով, օրս ու ումբրս մաշվել էր։ Շատ անգամ ուզում էի իմ գլուխս մահու տամ, չէի իմանում՝ թե սրա շարեն ի՞նչ կըլի։ Թող լսողը չհավատա, ամա էս ցավն էնպես էր սիրտս առել, որ շատ անգամ գժվածի պես ընկնում էի սար ու ձոր, ման գալիս, մտածում, էլ ետ սիրտս լիքը տուն գալիս»։

Այն ժամանակվա պայմաններում հեշտ չէր ելք գտնելը, բայց և անհնարին չէր այդ Աբովյանի համար։ Երկարատև ներքին պայքարից հետո հարցը լուծվեց հօգուտ աշխարհաբարի։ Ժողովրդի սերը հաղթեց. «թող ինձ այսուհետև տգետ կանչեն, լեզուս բաց ա էլել իմ ընտիր, ազիզ, իմ սրտի սիրեկան ազգ։ Թող տրամաբանություն գիտեցողը իրեն համբարի համար գրի, ես քո կորած, շվարած որդին՝ քեզ համար»։

Պատմական մեծ անհատը մեծ է հենց նրանով, որ կարողանում է պատասխան գտնել ժամանակի կողմից առաջադրված հարցերին, համարձակ վճիռ արձակել այն բոլոր խնդիրների վերաբերյալ, որոնք վաղուց իրենց լուծմանն են սպասում։ Այսպիսով Աբովյանը արձակում է հայ գրականության ապագա բախտի ու ճակատագրի համար այնքան անհրաժեշտ վճիռը։

Հայ նոր աշխարհիկ գրականության հարցը, սակայն, լեզվի աշխարհականացումով չէր լուծվում։ Հրաժարվելով գրաբար լեզվից, անհրաժեշտաբար պետք էր հրաժարվել հին գրականության բովանդակությունը կազմող կրոնական միստիկայից։ Լեզվի աշխարհականացման հետ անհրաժեշտաբար կապվում էր նոր աշխարհիկ բովանդակության, աշխարհիկ թեմատիկայի հարցը։ Ժողովրդի հետ ոչ միայն պետք է խոսվեր նրան հասկանալի լեզվով, այլ և

այնպիսի նյութի մասին, որ մոտ ու հարազատ լինեն նրա մտքին, նրա հոգուն: Բուն ժողովրդի կյանքը, նրան շրջապատող առօրյան, նրա զգացումներն ու խոհերը, նրա ծոցից դուրս եկած հայրենասեր մարդկանց սխրագործությունները, սոցիալական կյանքի շարն ու բարին, ահա թե ըստ Աբովյանի ինչը պիտի կազմեր գրական երկի նոր կենդանի բովանդակությունը: Ժողովրդի լեզվով, ժողովրդի կյանքից, ժողովրդի համար, այս էր Աբովյանի գեղարվեստական նոր սկզբունքը: Այսպես էր Աբովյանը լուծում հայ գրականության ժողովրդայնացման խնդիրը:

Եթե Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի առաջաբանը հանդիսանում է հեղինակի դեմոկրատական գեղագիտական սկզբունքների փայլուն շարադրանքը, ապա բուն վեպը հանդիսանում է նույն այդ սկզբունքների նույնքան փայլուն և հետևողական կիրառումը:

«Վերք Հայաստանի» վեպում կենդանի մարդը խոսեց կենդանի լեզվով, խոսեց ապրող և շնչող մարդկանց հետ:

Անօրինակ ծանր ու ցավատանջ երկունքով ծնունդ առավ հայ նոր աշխարհիկ գրականության անդրանիկ, ուստի և ամենասիրելի զավակը՝ «Վերք Հայաստանի» անմահ գիրքը:

Հայ գրականության այդ նշանավոր տարեթիվը հանդիսացավ 1840 թվականը:

* * *

«Վերք Հայաստանի» վեպում պատկերված է 19-րդ դարի 20-ական թվականների հայ իրականությունը: Դա Հայաստանի համար պատմական մի այնպիսի ծանր ժամանակաշրջան էր, երբ այնտեղ ապրող ժողովուրդները, հատկապես հայերը, ծվատվում էին պարսիկ սարդարների արյունոտ ճիրաններում: Ժողովուրդն ապրում էր ստրկական կյանքով, երկիրը վեր էր ածվել տառապանքի մի գնդանի. ամեն ինչ ենթարկված էր սարդարի բմահաճույթին, բոլոր սրբությունները ոտնահարվում էին նրա ապօրեն ցանկություններին բավարարվում տալու համար:

«Ո՛չ տունն էր իրանը, ո՛չ ապրանքը, ո՛չ ջանքը, ո՛չ օղուշաղը»։ Իբրև բռնակալության սիմվոլ, Աբովյանը նկարագրում է նրեանի բերդը, այդ «հազար դլխանի դեր», որ կույ է տվել տասնյակ հազար անմեղներին: Չնայած ժողովրդի այն ժամանակվա իշխող խավերը՝ աղայությունն ու հոգևորականությունն ակամա համակերպված այդ բարբարոս կարգերին, բարոզում էին հնազանդություն, բայց և այնպես ժողովուրդը չէր հաշտվում իր վիճակի հետ, չէր ընկճվում բռնակալ ուժի առաջ: Ժողովրդի մեջ կային ըմբոստ ոգիներ, որոնց անկարելի էր ընկճել սրով և բանտով. նրանց ոգի և համարձակություն էր տալիս հայրենիքի և ժողովրդի ազատության դադափարը: Ազատին հայ ժողովրդի հերոսության մարմնացումն էր Աբովյանի համար:

Հայտնի է, որ խաչատուր Աբովյանը իր «Վերք Հայաստանին» անվանում է պատմական վեպ: Ես անշուշտ այդ երկի ճիշտ բնութագիրն է: Սակայն չպետք է աչքաթող անել մի հանգամանք. Աբովյանի վեպի առանձնահատկություններից մեկը, հայ մյուս պատմավեպերի համեմատ, այն է, որ նրա նկարագրած «պատմական դեպքերը» դեռևս թարմ էին, դեռ գրանք չէին էլ դարձել բառիս իսկական իմաստով պատմություն: Աբովյանը ինքը այդ

դեպքերի ժամանակակիցն էր ու մասնակիցը և այդ է պատճառը, որ նա իր նկարագրած անցքերին ու անձերին նայում է իրրեւ ոեւալ կյանքի, շարժում իրականութեան:

Այս իմաստով էլ «Վերք Հայաստանին» Արուստանի ապրած ժամանակաշրջանի համար միանգամայն ժամանակակից, ակտուալ երկ էր, քաղաքական մեծ լիցքով մի երկ, որ իրենց վառ արտահայտությունն էին գտել ժամանակի ամենաայրուղ հարցերը, ժամանակի մարդիկ՝ տարբեր սոցիալական խավերով և պատմության օրակարգում գրված հարցերի նկատմամբ տարբեր դիրքորոշումով:

19-րդ դարի 30—40-ական թվականներին հայ ժողովրդի պատմության օրակարգում դրված հիմնական խնդիրը, դա հայ ժողովրդի պատմական ճակատագրի հարցն էր: Ահա հենց այդ էլ դարձել է «Վերք Հայաստանին» վեպի կենտրոնական հարցը: Պատմական ինչպիսի ուղի է անցել հայ ժողովուրդը, ինչպիսին էր նրա վիճակը նշանավոր այն դեպքերի՝ ռուս-պարսկական պատերազմի նախօրյակին և թե ինչ էր նշանակում հայ ժողովրդի համար 1827 թ. պատմական ակտը՝ ռուսական տիրապետության տակ անցնելը: Այս խնդիրներն է ահա, որ առաջ է քաշում Արուստանը և հիմնական այս խնդիրների շուրջն է, որ դառնում է «Վերք Հայաստանին»: Այդտեղից էլ սկիզբ են առնում Արուստանի բոլոր մտորումները:

Իհի ակնարկ նետելով հայ ժողովրդի անցած պատմական ուղուն՝ Արուստանը իր ժողովրդին բնութագրում է որպես աշխարհի ծանրագույն ճակատագիր ունեցող ժողովուրդներից մեկը:

Հայ ժողովրդի պատմությունը, դա ողբերգական պատմություն է, սաւկայն, ըստ Արուստանի այդ պատմությունը միաժամանակ և հերոսական պատմություն է, քանի որ հայ ժողովուրդը ամենադաժան անցյալում, բարբարոս ժամանակներում գերազանց ուժի դեմ անվերջ մաքառման պայմաններում չի ընկճվել, չի ոչնչացել, ապրել է, ապրել հարուստ, ստեղծագործ կյանքով, և թեկուզ հոշոտված, արյունաքամ, բայց կենդանի դուրս պրծել պատմության արյունոտ ժանիքներից, եկել, հասել է 19-րդ դարը:

«... Քսան դարու միջում՝ լուսավորյալ, քրիստոնյա, խաչապաշտ եվրոպացոց ոտը՝ ողորմելի Ամերիկա էնպես քանդեց, ջնջեց, հողի հետ հավասարեց, որ հինգ վեց միլիոն ազգերիցը՝ էս օր հազար հոգի էլ չեն մնացել, էն էլ սար ու ձոր ընկած, վայրենի գազանների պես են իրանց սև օրը լալի ու կոտորվում. բաս ինչ աներ հայոց խեղճ ազգը, որ ոչ թե քրիստոնեի, կամ լուսավորյալ ազգի, այլ հեթանոսի, կռապաշտի, մահմեդականի, անորենի ձեռին էր աչքը բաց անում, նրանց հետ քյալլա տալիս, ու շատին շատ անգամ՝ իր ոտի տակը քցում, բայց կարող էր վարդը ծովի միջում գորանալ, մանիշակը կրակի առաջին դիմանալ. կարող է կակող ցորենի հասկն էն կայծակին ու կարկտին համբերել, որ մեր ազգը իր թշնամուն համբերել էր, իա դիմացել: Հայոց ազգ, հայոց ազգ, ձեր ջանին մեռնիմ. հայոց ազգ՝ քո հողին մատաղ հայոց աշխարհ՝ էն ո՞ր կաթը դուք ծծեցիք, էն որ մեջքը ձեզ բերեց, էն որ ձեռը ձեզ դրկեց, էն ո՞ր բերանը ձեզ օրհնեց, որ դուք էս հողին ունենաք, էս սիրտը ձեր միջումը ըլի, էս հրաշքը դուք աշխարհին ցույց տաք»:

Հայ ժողովրդի ողբերգական անցյալի մեջ Արուստանի համար ուրախալին և գոտեպնդիչը նրա անօրինակ կենսունակությունն էր, ապրելու աներեր կամքը, ստեղծագործական զարմանալի ոգին: Այդ էր ահա, որ ոգի առած Արուստանի

մեջ՝ այնպիսի հզոր ձայնով և վիթխարի ուժով խոսեցրեց նրան այդ ժողովրդի գալիքի մասին, ազդարարեց նրա ապագան:

Հայ ժողովրդի անցյալ ամբողջ պատմության մեջ, Աբովյանի կարծիքով ծանրագույնը վերջին շրջանի պարսիկ խաների տիրապետության ժամանակաշրջանն էր: Այդ ոչ միայն այն պատճառով, որ Աբովյանի արտահայտությամբ հայ ժողովուրդը «շունչը բերանը հասած» իր օրհասին էր սպասում, այլև մանավանդ այն պատճառով, որ թվում է թե հայ ժողովուրդը հրաժարված իր հերոսական անցյալի տրադիցիաներից, սկսում էր հաշտվել իր ստրկախան կացության հետ, համակերպվել ամոթալի վիճակին:

Անպատվաբեր այս վիճակի ամբողջ պատասխանատվությունը Աբովյանը դնում է հոգևորականության վրա: Հոգևորականությունն է, որ քրիստոնեական անհիշաչարության ստրկացնող քարոզով մեռցնում է ժողովրդի ոգին: «Քրիստոնեն սրով չի պետք է իր բանը յուր տանի: Նրա թուրը իր համբերությունը ու հավատն ա», շարունակաբար կրկնվող հոգեսպան այս քարոզներով հոգևորականությունը իրորձում էր սրին ապավինած ժողովրդին դարձնել խաչի հլու գերի: «Վերք Հայաստանի» վեպի մեջ Աբովյանը անհուն զայրույթով ծառանում է հոգևորականության դեմ, նշավակության սյունին դամբելով նրանց իբրև ժողովրդի ստրկական վիճակի ամբողջ պատասխանատվության կրողներին:

Իր դիպուկ հարվածը ուղղելով կղերին ու կղերական գաղափարախոսությանը, Աբովյանը իրորձում է ժողովրդի մեջ վերակենդանացնել ազատագրական պայքարի բազմադարյան տրադիցիան, սթափեցնել նրան անզգայությունից ու թմրությունից, զարթեցնել նրա մեջ պատվասիրության, ազգային արժանապատվության զգացմունքները, խթանել նրա ինքնագիտակցությունը: Վերջնականապես տապալելով հոգևորականության հեղինակությունը, Աբովյանը այն հայացքն է զարգացնում, թե ժողովրդին անհրաժեշտ են նոր, իսկական ուսուցիչներ, լուսավոր ու ազատամիտ գաղափարներով տոգորված մարդիկ, որ ժողովրդի մեջ ներարկեն հայրենասիրության և ազատասիրության ոգին, առաջադրելով նրան դեպի լուսապայծառ ապագան:

Վեպի հերոսը՝ Աղասին իր գործունեությամբ Աբովյանի քաղաքական այդ թեորհայի գեղարվեստական մարմնավորումն է հանդիսանում: Ցուցադրելով պարսկական բռնակալության դեմ ծառացած Աղասուն, Աբովյանը դրանով իսկ պրակտիկայում ջարդ ու յիշուր է անում քրիստոնեական մորալի այն թյուր սկզբունքը, որի համաձայն սուր վերցնելը, ինչպիսի նպատակ էլ հետապնդելու լինեք այն՝ չարիք է: Աղասու կերպարով Աբովյանը ցույց տվեց, որ ժողովրդի մեջ կան և զնալով ավելի շատ կլինեն զենքին ապավինած մարդիկ, որոնք շատրվանալով քրիստոնեական մորալի սկզբունքներին, հայրենիքի ազատությունն ու փառքը վեր են համարում սեփական շահերից և նույնիսկ կյանքից:

* *

Իբրև պատմիչ և վկա հայ ժողովրդի պատմության հանրադույն ժամանակներից մեկի՝ ամենաողբերգական պատկերներով ներկայացնելով իր ժողովրդի գլխով անցած աննրևակայելի աղետները, Աբովյանը միաժամանակ անկրկնելի ոգևորությամբ և խանդով ի լուր աշխարհի պատմում է իր ժողո-

վրդի բարեբախտությունը կապված պարսիկ խաների վայրագ տիրապետության տապալման հետ։ Աբովյանի արտահայտած հայ ժողովրդի այդ բարեբախտությունը անխափան է թվում նրանով, որ իր ժողովրդի այդ նոր վիճակի քաղաքական և բարոյական հենարան է հանդիսանում Ռուսաստանը, ուսմեծ ժողովուրդը՝ որի ձեռքից նա ստացավ իր ազատությունը։

Ինչո՞վ էր պայմանավորված դեպի Ռուսաստանն ունեցած մեր հեղինակի այդօրինակ վերաբերմունքը. — դա պայմանավորված էր պատմական փաստերից հանած այն միակ ճիշտ հայացքով, որի համաձայն, հայ ժողովրդի պատմական բախտը, նրա ներկան և ապագան մեկ ընդմիշտ միահյուսվում է ռուս ժողովրդի բախտի ու ճակատագրի, նրա ներկայի ու ապագայի հետ։ «Վերք Հայաստանի» վեպում Աբովյանը ոչ միայն երախտագիտաբար արձանագրում է այն դերը, որ ունեցան ռուսները հայերի կյանքում 1827 թ. պատմական ակտով, այլ, որ գլխավորն է, նշում էր այն ասլագա ուղին, պատմական այն հեռանկարը, որ այնուհետև բացվում էր Ռուսաստանի տիրապետությունն ընդունած հայ ժողովրդի առաջ։

Գծելով հայ ժողովրդի պատմական հեռանկարը, Աբովյանը հիրավի զարմացնում է հանճարիղ գրողի, մեծ մարդու և շրջահայաց քաղաքացու իր էականատեսությամբ։ Ըմբռնելով, որ ազգերի և ժողովուրդների պատմական մրցակցության մեջ հայ փոքրաքանակ ժողովուրդը, որքան և օժտված կենսական ուժերով, այնուամենայնիվ իր գոյությունը պահպանելու համար պետք է հենվի բարեկամական մի հզոր ուժի, Աբովյանը իմաստնաբար մատնացույց արեց հզոր Ռուսաստանը, ուսմեծ ժողովրդին։

Նախ՝ Աբովյանը ի՞նչպես է գնահատում պատմական այն մոմենտը, երբ Կովկասահայաստանում հաստատվեց ռուսական տիրապետությունը։ Կովկասահայերի այդ ժամանակվա քաղաքական վիճակը Աբովյանը նմանեցնում է «շունչը բերանը հասած» մարդու վիճակին։ Այդ վիճակից հայերը մի ելք էին սպասում՝ «որ ռուսաց հզոր արծիվը դա ու իրանց հողն ու դավակը իր թևի տակովն ունի»։ Եվ եթե «եվրոպացիք Ամերիկա ավերեցին, հողի հավասարեցին», ապա «Ռուսք Հայաստան կանգնեցրին ու ասիացվոց բիրտ, գազան ազգերին մարդասիրություն ու նոր հոգի տվին»։ Ահա թե ինչու է հայերը չօն կարող մոռանալ ռուսաց արածը, նրանց մարդասիրությունը, մեծահոգությունը։ Ահա թե ի՞նչու է Աբովյանը բուռն խանդով բացազանչում. «Որհնվի էն սհաթը, որ ոսի օրհնած ոտը հայոց լիս աշխարը մտավ, ու զղբաշի անիծած չար շունչը մեր երկրիցը հալածեց։ Քաշած օրերը մտքըներս բերենք ու ոսի երես տեսնելիս երեսներիս խաչ հանենք, աստծուն փառք տանք, որ մեր աղոթքը լսեց, մեզ ռուս թագավորի հզոր, աստվածահաս ճեռքի տակը բերեց»։

«Վերք Հայաստանի» վեպի բազմաթիվ էջերը փառաբանում են ռուս ժողովրդին — վեր հանում նրա մի շարք բարեմասնությունները, ցուցադրում նրա հզորությունը, նրա զենքի ուժը։ Եվ պիտի ասել, որ այդ էջերը հարկադրաբար գրված չոր ու պաշտոնական էջեր չեն, այլ ստեղծված են Աբովյանի ջերմ ու խանդավառ շնչով։

Փառաբանելով ռուսական հաղթական զենքն ու զորքը, Աբովյանը ամենեվին մտադրություն չի ունեցել հայերին պատկերացնելու որպես զենքի անդունակ, ռազմական շնորհից զուրկ և հանուն հայրենիքի նահատակվելու անկարող ժողովրդի։ Ընդհակառակը, Աբովյանը վեր հանելով բարի և բարիացական Ռուսաստանի հայերի կյանքում կատարած անգնահատելի ծառայություն-

ներ, չի մոռանում ընդգծելու այն խոշոր դերը, որ միաժամանակ ունեցան հայերը ռուս-պարսկական պատերազմի մեջ, մի դեր, որը նպաստեց ռուսական զենքի հաջողությանը այդ պատերազմում:

Սակայն, Աբովյանը դիտակցում է, որ հայ ժողովրդի մարտական ուժերը, նրա պատմական հեռանկարները, դեպքերի բնական ընթացքով արդեն զուղակցվել էին ռուս ժողովրդի մարտական հզոր ուժերի և նրա պատմական հեռանկարների հետ: Աբովյանը լիովին դիտակցում է իր ժողովրդի համար փրկարար այս մեծ իրողությունը և խոշոր նշանակություն է տալիս ռուսների ու հայերի զենքի եղբայրությանը, դրա մեջ տեսնում հայերի քաղաքական ապահով և հաստատուն վիճակի երաշխիքը: Պատահական չէ, որ հեղինակի սիրելի հերոսը, Աղասին իր փորրաթիվ կտրիճներով վերջի վերջո միանում է ռուսական բանակին: Աղասու խմբի համար այլ հեռանկար չէր էլ կարող լինել: Նրա կատարած բոլոր գործողությունները նրան տանում էին դեպի մերձեցումը ռուսական հզոր բանակի հետ: Այդ մերձեցումը բնական է դառնում այն պարզ պատճառով, որ նրանց միացնում է նպատակների միասնությունը: Իր ծառայությունն առաջարկելով ռուսական բանակի զենքերով Մաղաթովին, Աղասին գիտակցում էր, որ դրանով իսկ ծառայում էր իր սեփական նպատակներին, իր հալընների և ժողովրդի ազատության գործին:

«Գլուխս եղ ևմ դրել, որ ոսին ղուրբան անեմ: Վաղուց էս մուրազը սըրտումս կար, վախտ չէի ճարում... Բար ըլի մեր աշխարքն անօրենի ձեռիցն ազատվի, թող մեր կերածը ցամաք հաց ըլի»: Աղասու այսպիսի խոսքերով պատճառաբանված այդ քայլը ունի ոչ միայն ուղղակի իմաստ և նշանակություն, այլև սիմվոլիկ բովանդակություն: Իր հերոսի այս գործողությամբ Աբովյանը լուծում է մի խնդիր՝ ռուսների և հայերի մշտական եղբայրացման խնդիրը, իրենց կյանքը և բախտը արյան դաշինքով իրար հետ զոդելու պատմական խնդիրը:

Այս տեսակետից նշանակալից է «Լերբ Հայաստանի» վեպի հավելվածի «Զանգի» վերջը, որտեղ Աբովյանը ռուս և հայ ժողովուրդների մշտական սերտ բարեկամություն է քարոզում, բարեկամություն, որ հեղինակի խորին համոզմունքով հայ ժողովրդի մշտական բորբոքության նախապայմանն էր հանդիսանալու:

Հայտնի է, որ Աբովյանը դրվատիքի ջերմ խոսքեր ասելով ռուս ժողովրդի մասին, նույնպիսի խանդավառությամբ էլ խոսում է ռուս միապետի և նրա հենարաններից մեկը հանդիսացող Պասկևիչի վերաբերյալ: Առաջին հայացքից տարօրինակ թվացող այս փաստը հասկանալի է դառնում, երբ մենք նկատի ենք ունենում պատմական այն իրադրությունը, որի մեջ գտնվում էր 'Դովկասահայաստանը մինչև ռուսական տիրապետություն ընդունելը:

Կարլ Մարքսին հասցեագրված իր մի նամակում Ֆրիդրիխ Էնգելսը գրում է. «Ռուսաստանը, հիրավի, Արևելքի նկատմամբ կատարում է պրոդյուսիվ դեր»: Եվ կամ՝ «Ռուսաստանի տիրապետությունը Սև և Կասպից ծովերի և Միջին Ասիայի համար կատարում է քաղաքակրթիչ դեր»: Ահա այս է, որ հաճախ մոռացվում է ցարիզմի հանդեպ Աբովյանի վերաբերմունքի մասին խոսելիս: Այս չի կարելի մոռանալ, պատմական հողից չկտրվելու և վերացական դատողությունների ու սխալանքների մեջ չընկնելու համար:

Զպետք է մոռանալ ևս մի հանգամանք: Եթե Աբովյանը ցարական Ռուսաստանի տիրապետությունը արդարացի կերպով գերադասում է հայ ժողո-

վրիդին բնաջնջում սպառնացող տաճկական և պարսկական բարբարոս տիրապետություններից, այդ ամեննին էլ չէր նշանակում, թե Աբովյանը չէր տեսնում ցարիզմի գաղութարար էությունը:

* * *

Տեղական ժողովուրդների քաղաքական շահերի միասնության գաղափարը՝ ի հակադրություն օտար նվաճողների՝ «Վերք Հայաստանի» վեպում արտահայտություն գտած այն մոմենտներից է, որոնք այսօր հնչում են խիստ այժմեական:

Աբովյանը մեծադույն հայրենասեր է, սակայն այդ հայրենասիրությունը ոչ թե նրան կաշկանդում է ազգային շահերի անձուկ շրջանակներում, հակադրելով նրան տեղական մյուս ժողովուրդներին, այլ հենվում է տեղական մյուս ժողովուրդների շահերի օրեկտիվ ըմբռնման և դրանից հանած միանգամայն առողջ, հումանիստական եզրակացության վրա: Լինելով իր հայրենիքի եռանդուն և անկեղծ պաշտպանը, Աբովյանը անկախ կրոնական և ազգային տարբերություններից ամենաջերմ սիրով է վերաբերվում այն բոլոր ժողովուրդներին, որոնք իր ժողովրդի հետ միևնույն հողի և ջրի ծնունդ լինելով, կապված են տնտեսական և քաղաքական միևնույն շահերով և բաժանում են հարազատ ժողովրդի ճակատագիրը: Այդպիսին է նրա վերաբերմունքը դեպի Երևանի բնիկ թուրքերը (ադրբեջանցիները), ինչպես նաև դեպի վրաց ժողովուրդը:¹

Աբովյանի կարծիքով հայերին և հրեանի բնիկ թուրքերին (ադրբեջանցիներին) միացնում է ոչ միայն միևնույն հայրենիքը, այլև պարսկական բռնակալ լծի դեմ ունեցած ընդհանուր թշնամանքը: Խիստ բնորոշ է, որ Քանաքեռում կատարված դեպքերի առնչությամբ, Երևանի հայ և ադրբեջանցի ազգաբնակչության ղեկավարներ Սհակ աղալի և Սվանդուլի խանի միջև ծագած խոսակցությունը: Տեսնելով քանաքեռցիների նկատմամբ պարսիկ ֆառաշենների գործ դրած բռնությունները, Սվանդուլի խանը խորր և անկեղծ վշտով ասում է. «Ախ ճամփան փուշ ու տատասկ դառնար էս անիծած դաջարի, որ մեր հողը չմտնեի: Աշխարքը քանդեցին, աստված մեկ քար էլ ա չի քցում սրանց գլխին, որ սատկին, փչանան: Էս ի՞նչ ա էս խեղճ խալխի հալը: Մեկ աղչկա խաթեր էսքան տուն քանդիլն, աստված ի՞նչպես ա դաբուլ անում: Աստված մեր թուրը մեկ օր մեր սիրտը կցցի, էս զուլումին քարը չի դիմանալ, ուր մնաց մարդը: Աֆարիմ Աղասի, էս սհաթին էստեղ ըլի, աչքին պաշկանիմ: Ռաշիդ տղեն էնպես կրլի, համա ինչ անես, որ անօրենի ձեռի տակ ենք մնացել: Ապա դառնալով պարսիկների լծի տակ ճնշված երկու ժողովուրդների՝ հայերի և ադրբեջանցիների փոխհարաբերության հարցին, Աբովյանը գրում է. «Երևանու բնիկ թուրքերը, որ հայերի հետ մեկտեղ մեծացել, ախպոր պես էին վարվում, Սարգարին, Հասան-խանին անիծելով, թքելով»:

¹ Աբովյանը բացառիկ մեծ համակրություն է ցուցաբերել նաև զեպի թուրք ժողովուրդն ու նրա կուլտուրան: Աբովյանն առաջին մարդն էր, որ առևտական մամուլում ապագրված իր հողվածներով, ինչպես ուս պետականության, այնպես էլ առևտական գիտական մաթի ուշադրությունը հրավիրեց թուրք ժողովրդի վրա. ընդգծելով նրա ազգային միջաբարձ բարեմասնությունները՝ որպես պարապորեցեոզ ղանգամանքներ՝ մասնագիտու աճար նրա բախտով և վիճակով: Ինքը Աբովյանը, կարելի է ասել, Ռուսաստանում հանդիսացավ առաջին քրդագետը:

ղզլբաշի վրա ատամները կրճտացնելով, քիչ քիչ քաշվեցին, ու դեմը գնում էին, դեմը ասում. «Տեր աստված, երբ կըլի, որ քո ողորմության դուռը բացվի ու մենք էս անիծած ղզլբաշի ձեռքերը մեկ օր ազատվինք»։ Զուների սրանք հուլու ըլելով, չէին ուզում մեկ օր էլ անրանց ծառայեն, ու շատ անգամ հայերի հետ միացել, քշել էին նրանց, ամա թրի զոռով եկել, էլետ հրկիրը զսվթել էին»։

Որ իրոք Աբովյանը հայերի և ադրբեջանցիների մեջ քաղաքական շահերի ընդհանրություն է տեսնում, դա երևում է նաև հետևյալ փաստից. «Վերք Հայաստանի» վեպում նկարագրելով ռուսական բանակի կողմից Երևանի գրավումը, Աբովյանն ասում է, որ ոչ միայն հայերի, այլև տեղական թուրքերի համար այդ մի փրկարար ակտ էր. «էն ժամանակվան խաղերը,— գրում է Աբովյանը,— որ հանել, ասում էին հավիտենա հավիտենից կարող են աշխարքին վկայություն տալ՝ թե թուրք ու հայ հենց իմացան թե աստված վեր էկավ իրենց համար»։

Թեև վրաց ժողովուրդը հայերից մոտ քառորդ դար ավելի վաղ էր ընդունել ռուսական տիրապետությունը, բայց և այնպես Աբովյանը վրացիներին համարում է իր ժողովրդին բախտակից ժողովուրդ։ Ինչպես հայերի և ադրբեջանցիների, այնպես էլ վրացիների քաղաքական բարվոք վիճակը և օսմանյան ու պարսկական բարբարոս տիրապետություններից մեկ ընդմիշտ ապահով լինելու միակ նախապայմանը Աբովյանը տեսնում է՝ ռուսների հետ հիշյալ ժողովուրդների մշտական անխախտ կապի և բարեկամական համագործակցության մեջ։

Հայտնի է, որ «Վերք Հայաստանի» վեպի հավելվածի՝ «Զանգիի» վերջում ռուս-հայ բարեկամությունը Աբովյանը արտահայտում է Վոլգա և Զանգի գետերի քույրացման սիմվոլիկայով։ Աբովյանը համանման մի սիմվոլ է գործածում «Վերքում» հայ և վրաց ժողովուրդների ազգային շահերի և պատմական ճակատագրի միասնության վերաբերյալ, երկուսի համար էլ նշելով մի ընդհանուր ուղի՝ ռուս ժողովրդի հետ եղբայրական դաշինքի ուղին։ «Մեկ ահագին շորս ջաղացի ջուր՝ մեկ բարձր բլրի տակից, դուրս ա պրծնում... բլրի շորս կողմը պտտում, էլ ետ գետինը մտնում, ու կես փայլ առու դառած՝ գնում Երևանու դաշտը՝ որ Ապարանու սուրբ էջմիածնին, Վաղարշապատին, Արմավրին, Մասիսին պատմի, ու գնա տրտում Նրասիի հետ, Զանգին ու Գառնու գետն էլ մեջ անեն ու գնան՝ Քուռն էլ մեջ անեն, իրենց արտասուքը նրանի հետ խառնեն ու տանին, Կասպից ծովու սիրտն ածեն նրա աղի ջրումը կորչեն, պարսից նավերը ջախջախող անեն, ռուսաց նավերը իրանց բամակի վրա տանեն ու բերեն, որ ճամփին չհուսահատվի, չբեզարի, ու էն իր բարի ոտը մեր աշխարհիցը չկտրի, որ բալքի մեր հայրենիքը՝ նրանց արծվի թևերի տակին զորանա, մեծանա, դարդերը մոռանա, ու էլ ետ իր առաջին փառքին հասնի»։ Այս հույակապ պատկերի մեջ արտահայտություն է գտել Աբովյանի և՛ անկեղծ բարեկամական զգացմունքը դեպի վրաց ժողովուրդը, և՛ նրա մոլեգին ատելությունը դեպի պարսկական վայրագ տիրապետությունը և՛ նրա խոր հավատը Ռուսաստանի և ռուս ժողովրդի անկեղծ բարեկամության հանդեպ՝ դեպի հայերն ու վրացիները։ Այդ շափազանց կարևոր հատվածում ուշագրավ են նաև Աբովյանի «մեր աշխարհիցը», և «մեր Հայրենիքը» արտահայտությունները։ Երկու դեպքումն էլ «մեր» բառը վերաբերում է միաժամանակ թե Հայաստանին և թե Վրաստանին։ Եթե նկատի ունենանք, որ «Հազար-

փեշեն» երգիծական պոեմում Աբովյանը հայերի և վրացիների համար գործ է ածում «մեր խալխը» արտահայտությունը, այն ժամանակ միանգամայն պարզ կլինի, թե Աբովյանի էության մեջ որքան խորն է արմատացած տեղական ժողովուրդների ընդհանրության, համերաշխության և եղբայրության գաղափարը:

* * *

Խոսելով «Վերք Հայաստանի» վեպի մասին, մեր գրականագետները սովորաբար այն ներկայացնում են միակողմանի՝ ընդգծելով միմիայն այդ երկի օտար կեղեքիչների դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի արտահայտությունը լինելու մոմենտը: Այդպես ներկայացնել «Վերք Հայաստանին» կնշանակի աղքատացնել նրա հարուստ բովանդակությունը և նվազեցնել նրա արժեքը: «Վերք Հայաստանին» արտահայտություն է հայ ժողովրդի արտաքին, միաժամանակ և ներքին «վերքերի»: Ավելին՝ այն միջոցին, երբ Աբովյանը գրում էր իր անմահ երկը՝ 1840 թվականին, 13 տարի անց այն ժամանակամիջոցից, երբ հայ ժողովուրդն արդեն թոթափել էր պարսկական լուծը, երբ նրա համար անցած պատմություն էր դառել ֆիզիկական բնաջնջման սպառնալիքը, այդ ժամանակաշրջանում, հայ ժողովրդի պատմական բախտի տեսակետից, առավել հրատապ ու հրամայական էր նրա ներքին կյանքի խնդիրները, նրա առաջընթացի ներքին արգելքներն ու խոչընդոտները: Եթե արտաքին թշնամուն Աբովյանը նայում է իրրե անցած աղետի, իրրե ծանր վերհուշի, հապա ներքին թշնամին Աբովյանին մտահոգում է իրրե ներկա, մասամբ և գալիք աղետ:

Եթե հայ ժողովրդի կյանքի պատմական բարեբախտ հանգամանքների շնորհիվ նրա օրակարգից դուրս էր եկել ֆիզիկական պայքարի խնդիրը, հապա դրա փոխարեն այլ հրամայական խնդիր էր դրված նրա առաջ՝ աշխարհի և ժողովուրդների կուլտուրական առաջխաղացման ընդհանուր շարժումից դուրս չմնալ, ետ չընկնել, Աբովյանի այս գիտակցությունից առաջ են գալիս ոչ պակաս ծանր խոհեր, քան իր ժողովրդի ֆիզիկական ոչնչացման հնարավորության մտքից:

Աբովյանին պաշարած մոռյալ խոհերը անհիմն չէին, եթե նկատի ունենանք հայ ժողովրդի այն ժամանակվա կուլտուրական հետամնացությունը, նրան շրջապատող թանձր խավարը: Հայ ժողովրդի պատմական գոյության հետագա իրավունքն ու արդարացումը Աբովյանը այլ կերպ չի ըմբռնում, քան կուլտուրական բարձր նվաճումներ ունեցող ժողովուրդների հետ հավասարվելը, նրանց հետ ոտ ոտի գնալը: Եվ ահա այս առնչությամբ Աբովյանը առաջ է քաշում իր ժողովրդի լուսավորության, կուլտուրական մակարդակի բարձրացման, քաղաքական հորիզոնի ընդլայնման հարցերը, հարցեր, որոնք իրենց հերթին առաջ են մղում նոր խնդիրներ՝ լեզու, գրականություն, գիտություն, դպրոց և այլն: Աբովյանը մեծ հավատ ունի իր ժողովրդի արագ վերածնության նկատմամբ, միայն թե, նրա կարծիքով, հարյուրամյակներ հոգևոր և ֆիզիկական շղթաների մեջ տառապած ժողովրդի հանդեպ պետք է խնամք տանել, պետք է գուրս բերել նրան հոգևոր թմրությունից, առաջնորդել դեպի լուսավոր ուղիներ, ներշնչել բարձր գաղափարներ: «Խեղճ ազգի հոգին մինչև էսօր քաղել են, հազար տարվա յարա ունի սրտումը, որ դեռ չի սաղացել, էնքան դառն արտասուք ա կուլ տվել, որ ոչ աչքումը լիս կա, ոչ բերնումը

համ, ոչ սրտումը եղ. դու հենց ուզում ես, որ էստոնք մեկ սհաթումը անց կենան, ինչպես կրլիս: Հայ ժողովրդի կուլտուրական գործի զարգացման արդելակողներն են, որ Արուսյանի կողմից նշավակվում են իբրև թշնամիների:

Ո՞րն էր սակայն այդ ներքին թշնամին, ներքին աղետը: Դա վաղուց ի վեր հայ ժողովրդի կյանքում ղեկավար դեր ստանձնած և իններցիայով այն օրերում ևս իր զիրքը պահող հոգևորականությունն էր: Պորտաբույժ, հարստահարիչ այդ դասը հասարակական օրգանիզմում պատմականորեն թեև արդեն կորցնում էր իր դերն ու արդարացումը, բայց և այնպես շարունակում էր իրեն վերապահել ֆունկցիաներ՝ որոնց իրագործման համար նա անպետք էր: Լեզու, գրականություն, գիտություն, դպրոց առնելով իր իշխանության ներքո նա դրանք ծառայեցնում էր իր դասի նեղ էգոիստական շահերին, ժողովրդի տգիտությունը դարձնելով նրան անհասկանալի ու այդ կերպ իր իշխանությունը հաստատուն և հարատև պահելու միջոց:

ՆՔԼ հայ ժողովուրդը իր պատմության վերջին աղետալի դարերի ընթացքում դուրս է գտնվել կուլտուրական մարդկության շարքերից, դա, Արուսյանի կարծիքով, ուներ իր դժբախտ պատճառը: Սակայն քաղաքական նոր նպաստավոր պայմաններում, այդ ժողովրդի կուլտուրական հետամնացությունը այլ պատճառ չունի, քան այն, որ այդ գործի ղեկավարությունը իրենց վրա են վերցրել դրա համար չկոչված մարդիկ: «Հայոց ազգի ջանին դուրբան, մեկ նրա երեխին ուսում տուր, նրա էն լուսաթաթախ հողին կրթիր, կրթել եմ ուսում, անդիր բերան անել, գլխիցը դուս տալ չեմ ասում ու շարական փոխ, յա շիլափլավ ուտել սովորեցնել, որ մեզ էս տեղն ա քցել, տեսնեմ թե ջան կտա քեզ, թե չէ»:

Այստեղ բացահայտված է վանական-խալֆայական դպրոցի ամբողջ անհեթեթությունը, նրա անկարողությունը իսկական իմաստով կրթական օջախ լինելու, ժողովրդի լուսավորության գործը իր վրա վերցնելու: Մի այլ տեղ Արուսյանը գրում է. «Բայց վա՛յ էն երեխին, վա՛յ էն ազգին, որ աչքը էնպես զոգում բաց կանի, որ լսի տեղ խավար կտեսնի: Աչքը բաց դուզ ճամփեն կրթողա, քարերար կրնկնի: Վա՛յ էն ազգին՝ որ քնական օրենքը կթողա, անբնականին կհետևի, որ էնպես խրատ տվող չի՝ ունենալ, որ նրան հոգի տա և ոչ հոգին էլ հանի»:

Այն ժամանակվա հայկական իրականությունը ներկայացնելով որպես խավարի մոռյալ թագավորություն, Արուսյանը նորից և նորից ընդգծում է նման վիճակի համար պատասխանատվություն կրող հոգևորականության խավարամտությունը և կույր սնոտիապաշտությունը:

Արուսյանի կարծիքով հոգևորականությունը ոչ միայն անկարող է դառնալու ժողովրդի պահանջների ու շահերի արտահայտիչը, այլև այդ դասը տնտեսական և կուլտուրական իր շահերով կանգնած է ժողովրդի շահերին միանգամայն հակադիր բեկումն: «Վերք Հայաստանիում» նույնքան սուր և հետևողականորեն հոգևորականությունը քննադատված է որպես կեղերիչ դաս, որը գյուղական աշխատավորական համայնքի կյանքում իր գոյությամբ աններդաշնակություն է մտցնում: Ի՞նչ առևտրականն ու վաճառույն գյուղի համար գեռ դալիք աղետներ էին հանդիսանում, ապա հոգևորականությունն իբրև հարստահարող տարր ի սկզբանե անտի կար: Հենց այս առթիվ է, որ բարիկենդանի տոնի ուրախ սեղանի շուրջը խմբված գյուղացիք շատ սուր ոճ են գործածում հոգևորականության դեմ: Սրանց խոսքերի ու դատողություն-

ների մեջ կայծկլտում են առողջ՝ միտքն ու քննադատությունը: Հասարակական կյանքի շարն ու բարին հասկացող այս մարդիկ, խնդիրներին նայում են հասարակական օգտակարության տեսակետից: Այսպես նայելով հարցին, նրանք նկատում են, որ հոգևորականությունն իրեն չի արդարացնում: Հասարակական կյանքի օրդանիզմում նա կույր աղիքի դեր է կատարում: «Սահախ տեղը դատած մալը ուտելը ու դարդակ քնելը հարամ ա: Մարդ պետք է ինքն էլ աշխատի, որ կերածը հալալ ըլի», — ասում է Աղասին: Այս արդարացի դատավճիռն ուղղված է պորտաբույծ և ամենակեր կղերի դեմ: Ժամ ու պատարագի մեջ գյուղացին չի տեսնում հոգևորականության դերի արդարացումը: Այլ խնդիր է, եթե նա կարողանար առաջ տանել գյուղի լուսավորության գործը: «Այց այդ անհնարին է, որովհետև Պրի սեն ու սպիտակը հո էսպես տեղը տերտերներն էլ բռանց էին ջոկում»:

«Երաբ, որ լավ կարգացող էր էլել, — շարունակում է Աբովյանը, — երեսանց ջոկ, ժողովրդին ջոկ, զիշեր ցերեկ խրատ տվել, կարդացրել լուսավորել էր, հիմիկ մեր ազգը էս հալին կլեր»:

Պատմական անհրաժեշտության դիտակցությամբ, Աբովյանը առաջ է քաշում նոր ինտելիգենցիայի հարցը: Ժողովրդի ծոցից դուրս եկած, մարդկային կուլտուրայի մեծ նվաճումները յուրացրած և ժամանակի առաջավոր գաղափարները որդեգրած, ժողովրդի շահերով տոգորված ինտելիգենցիայի հանդես գալու հետ է Աբովյանը կապում իր լուսավորական ծրագրերի իրագործումը: Իբրև մի հեղինակ, որի հայացքը ուղղված է դեպի ապագան, Աբովյանը իր բոլոր հույսերը կապում է այդ ապագան կերտող սերնդի հետ: Ըրվեպում թեև հեղինակը հաճախ է հիշում անցյալը, ապա նա այդ անում է դարձյալ միևնույն նպատակով: Աբովյանի համար ինքնանպատակ անցյալը դոյություն չունի. այդ անցյալը նա դիտում է իր ժողովրդի գալիքը ուրվագծելու հայացքով: Այդ պատճառով էլ անցյալի դեմքերը Աբովյանի գրչի տակ հանդես են գալիս իբրև արդեն անցած, իրենց պատմական դերը ավարտած ֆակտորներ, այնինչ գալիք սերունդների հետ Աբովյանը խոսում է որպես իրական մարդկանց հետ, իբրև իր խոհերի և խոսքերի ունկնդիրների և մասնակիցների հետ:

«Ձեզ եմ ասում՝ ձեզ՝ հայոց նորահաս երիտասարդք՝ ձեր անումին մեռնիմ, ձեր արևին դուրբան, տասը լեզու սովորեցեր, ձեր լեզուն դայիմ բրունեցեր: Մեկ դարդակ լեզուն ի՞նչ ա, որ մարդ չկարենա սովորիլ: Ես չե՞ր ուզիլ, որ դուք էլ դրբեր դրբեր, ազգի միջումն անուն թողար, ձեր գրքերն էլ օտար ազգեր թարգմանեն, ձեր անունը հավիտյանս հավիտենից մնա անմահ: Ինչ կուզե ֆրանցուզերեն, նեմեցերեն դիտենանք, մենք չենք կարող էնպես բան գրիլ, որ նրանց միջումն անուն ունենա, շունքի նրանց միտքն, նրանց սիրտն ուրիշ ա, մերն ուրիշ. մեկ էլ որ նրանց միջումն էնքան գրող կան, որ ոչ թիվ կա, ոչ հեսաբ: Ռուսաց լեզուն մեր տերությունն ա, պետք է ամենից առավել համարինք, հետո մեր լեզուն ձեռք բերենք»:

Այս տողերը ավելի քան բնորոշ են Աբովյանի համար, խիստ բնորոշ վեպի գաղափարական նպատակադրման տեսակետից: Իսկ այդ նպատակադրման մեջ ամենահիմնականը դա աննախընթաց ուժով արտահայտված հեղինակի տիրական կիրքն է՝ իր հրաբորբոր խոսքը լսելի դարձնելու գալիք սերնդին, այդ խոսքի մեջ դնելով նույն այդ գալիքի նկատմամբ ունեցած իր

ազնիվ ցանկությունները, իր վառ հույսերը, իր անհողողող հավատը, իր բյուրեղյա սերը:

Աբովյանը այն ճշմարիտ մեծ գրողներից է, որոնց մոտ ներկան կամ ընդ-ված է դաշիքի հետ, որոնց համար գեղեցիկ և իդեալական վաղը ավելի կեն-դանի ու իրական է, քան արդեն գատապարտված իրականությունը: Աբովյանի վնասը գրված էր իր ժամանակի և ժամանակակիցների համար, սակայն այն նույնքան էլ, եթե ոչ ավելի, գրված էր հաջորդ տասնամյակների հաջորդ սե-րունդների համար: Հենց այդ էր պատճառը, որ գրվելուց մոտ երկու տասնա-մյակ անց, հրապարակված «Վերք Հայաստանին» ումբի պես պայթեց 50-ական թվականների հայ իրականության մեջ, հիմնիվեր կործանելով իրենց գոյությունը դեռևս քարշ տվող կրոնա-սխոլաստիկ գրականության և կուլտու-րայի բոլոր խարխուլ շենքերը: «Վերք Հայաստանի» վնասի հրատարակու-թյան թվականը՝ 1858 թիվը վճռական բեկման տարեթիվ հանդիսա-ցավ հայ գրականության համար: Աբովյանի «Վերքից» հետո, հաստա-տապես կարելի է ասել, որ ոչ մի քիչ թի շատ նշանակալից հայ գրող այլևս չընթացավ մեր անցյալ գրականության ուղիով: Հայ գրականության առաջըն-թացի ճանապարհին եղած բոլոր մշուշները ցնդեցին, գրականության երկնա-կամարում, որպես ուղեցույց արե՛՛ ճառագեց «Վերք Հայաստանին»:

Այսպես, զարնանային շոինդով և աղմուկով «Վերք Հայաստանին» կյանք մտավ և նրանով էլ սկսվեց հայ նոր գրականության լուսաշող դարունը:

«Վերք Հայաստանին» իբրև գրական երկ խիստ բացառիկ է, առանձնա-հատուկ: Այդ երկի կարևորագույն առանձնահատկություններից մեկը դա հե-ղինակի ներկայությունն է վեպում, մի ներկայություն, որ ընթերցողը զգում է առաջին էջից մինչև վերջինը: Հաճախ ընթերցողը այդ երկի մեջ՝ ավելի իրեն հեղինակին է տեսնում, քան հեղինակի պատկերած անձերն ու անցքերը:

Ընթերցողի աչքի առաջ կանգնում է մեծ ու փոթորկոտ խոհերով ու հույ-զերով մի հեղինակ, որը ազնիվ մի ձգտում ունի՝ պատասխան տալ իր ժո-ղովրդի առաջ ծառայած, վաղուց հասունացած բազմաթիվ խնդիրների, խըն-դիրների, որոնց հանդեպ անտարբերությունը կարող էր ճակատագրական լինել այդ ժողովրդի համար: Չկարողանալով անտարբեր մնալ իրեն հուզող բազ-մազան խնդիրների հանդեպ, վիպասանը ընթերցողի ներդաժմությանը ապա-վինելով, հաճախ ընդհատում է բուն պատմությունը, շեղվում մերթ օյս, մերթ այն հարցի կապակցությամբ և զիզզազ ու ոլորուն ճանապարհներով կրկին վերադառնում է իր պատմությանը: «Էս վ չի՛ սկսած բանը թողել ու Լսպես բարոզ ասել, ես էլ գիտեմ, ամա սիրտս չի՛ դիմանում, ի՞նչ անեմ»: Հաճախ հեղինակը գրքի էջերից գիմում է ընթերցողին, մտերմորեն խոսում նրա հետ, աղաչում նրան համոզվելու իր խոսքի ճշմարտությանը, ճիշդ է անում իր հուզ-մունքը նրան հաղորդելու, իրեն վշտակից ընկեր դարձնելու և այդ կերպ մխի-թարվելու:

Հեղինակը միշտ ընթերցողի հետ է. ոչ թե գրքի մեռած տաշերն են խո-սում, այլ խորը հեղինակն է մեզ հետ դուրսում, մեզ պատմում իր վշտերը՝ որոնք ծնունդ են առնում իր ժողովրդի ծանր միջոցների, վիպասանի կողքին միշտ ներկա է հրապարակախոսը, ազնիվ ու զգույն քաղաքացին, որը մերթ խարաչանում է, մերթ գուրգուրում, մերթ որոտում է ինչպես ցասկոտ ամպ, մերթ քերմորեն ժպտում ինչպես արեշող երկինք, նայած թե ի՞նչպիսի երևույթ է նա տեսնում, նամ ի՞նչ է պատկերում:

Վեպի բուն սյուժեի հետ առնչություն չունեցող, ընդհակառակը երկի գործողությունների հաջորդական և արագ ընթացքը խաթարող այդ շեղումները, որ առաջին հալացքից թվում են ավելորդ, իրականում, չափազանց կենսական են վեպի համար: Մարելի է ասել, որ դրանք՝ իր տեսակի մեջ բացառիկ այդ վեպի կենդանի զարկերակն են կազմում: Արտաբուստ գուցե և այդ շեղումները թուլացնում են վեպի դինամիկան, սակայն դրանք վեպին հաղորդում են ներքին մի անասելի դինամիկա, կուտակելով նրա մեջ պայթուցիկ մեծ ուժ, ընթերցողի միտքն ու հույզը բոցավառող ներքին մի անհանգչելի կրակ:

Սյուժեն այս վեպի համար սոսկ կմախք է, այնպես որ, «Վերք Հայաստանին» պատկերացնել առանց հեղինակի այդ շեղումների, դա կնշանակի կենդանի մարդուն պատկերացնել առանց սրտի և ուղեղի:

Վերոհիշյալ հանգամանքներով էլ պայմանավորվում է «Վերք Հայաստանին» վեպի մի այլ առանձնահատկությունը՝ այդ երկի բացառիկ անմիջականությունն ու անկեղծությունը:

Հայ գրականության մեջ թերևս չգտնվի մի այլ դործ, որ այնպես բնութագրի իր հեղինակին, ինչպես «Վերք Հայաստանին» Աբովյանին: «Վերք Հայաստանին» դա Աբովյանն ինքն է: Այդ գործի մեջ նա դրսևորել է իրեն ամբողջությամբ, չկարողանալով ոչինչ թաքցնել ընթերցողից: Իր նկարագրածն ու պատմածն Աբովյանը շատ ավելի խորն է ապրում և անմիջականորեն ընկալում, քան ամենաանմիջական ու ամենապարզամիտ ընթերցողը, ընթերցող, որ գրվածքի յուրաքանչյուր գործողությունը ընդունում է իբրև ճշգրիտ իրողություն:

«Վերք Հայաստանին» Աբովյանը դրել է անասելի կրքով, մեծ լարվածությամբ, ասես շունչը պահած: Ստեղծագործական այդ բուռն կրքի ու լարվածության ուժն արտահայտվել է նրա հախուռն ոճի, երկար ու ոլորուն նախադասությունների և անսովոր ու անօրինակ պատկերների մեջ: Երևանի բերդըն է նկարագրում, թե Զանգուն, ձմեռը, թե ամառը, երկիրն իր հրաշալիքներով, թե երկիրը փոթորկի ու կայծակահարության պահին, ուրախություն է արտահայտում, թե վիշտ, հերոսների արտաքինն է պատկերում, թե ներքինը, իր ապրումներն է պատմում թե ուրիշինը, բոլորը, բոլորն այնքան յուրօրինակ ձևով է կատարվում, այնքան տարբեր ընդհանրացած, բազմաթիվ հեղինակների մոտ կրկնվող միատեսակությունից, որ երբեք չի կարելի Աբովյանինը շճանաչել, ուրիշի հետ շփոթել:

Հարցերի այս շարքով չի սպառվում, և անհնարին է սպառել, «Վերք Հայաստանին» վեպի բաղմահարուստ բովանդակությունը և յուրօրինակ արվեստը: «Վերք Հայաստանին» վեհ ձգտումների, ազնիվ զգացմունքների, անկեղծության, սիրո մի կախարդական, հմայիչ աշխարհ է: Հեղինակի կախարդանքի միջոցները բաղմազան են:

Նա հմայում է իր ստեղծած բնության անզուգական պատկերներով ու նկարագրություններով, ժողովրդական կյանքի պատկերման շոշափելի կենդանությամբ, իր հերոսների ոգևորիչ խիզախությամբ, վերացական աշխարհները տանող դեղեցիկ խորհրդածություններով, խորին լիրիզմով, մարդկային ապրումների դրսևորման բաղմազանությամբ, իր բոցաշունչ հրապարակախոսությամբ, մարդկայնության իր ազնվացնող քարոզներով և վերջապես իր

Լույսի և խելիքի հարստությամբ:

Խաչատուր Աբովյանի ստեղծագործությունը հայ անցյալ դրականության այն մնայուն արժանիքներից է, որի հետ կապված է մի ամբողջ պատմաշրջան: «Վերք Հայաստանին» 19-րդ դարի առաջին քառորդի մեր գրականության խոշորագույն երկն է. նրա մեջ ցոլացնում է մեր ժողովրդի այդ ժամանակաշրջանի քաղաքական և կուլտուրական ձգտումները, նրա նյութական և հոգևոր բովանդակ կյանքը:

Զինված մարդկության ստեղծած առաջավոր կուլտուրայի ղենքերով, որոնցով մարդկային միտքը շղթայազերծ էր լինում կրոնական սխալաստիկայից, Աբովյանն իբրև կուլտուրայի մարտիկ իր ստեղծագործությամբ, մասնավորապես իր «Վերք Հայաստանի» վեպով սարմատական հեղաշրջում կատարեց մեր ողջ գրականության մեջ և մի ամբողջ գլխով վեր բարձրացրեց հայ ժողովրդի հասարակական գիտակցությունը: Սգտագործելով հեռավոր անցյալից եկող հայ կուլտուրայի ժողովրդական տարրերը, նա ստեղծեց նորորակ մի գրականություն, որի հատկանիշը ժողովրդայնությունն է: Աբովյանի «Վերք Հայաստանին» խարսխվեց ժողովրդի կյանքի և ժողովրդական բանահյուսության խորն իմացության և համարձակ օգտագործման վրա: Դեմոկրատական այս սկզբունքը թեև խոր արմատներ ունեն մեր գրականության հեռավոր անցյալում, սակայն, այն 19-րդ դարի մեր գրականությանն անցավ «Վերք Հայաստանիի» միջոցով:

«Վերք Հայաստանին» բացում է մեր ժողովրդի մտածումների հարուստ աշխարհը, դարավոր տառապանքների տխուր հետքերով և դեպի գալիքն ունեցած խոր հավատի պալծառ հեռանկարներով: Դրա մեջ է այդ անմահ ստեղծագործության հմայքի գաղտնիքը: Դրանում է այդ երկի հեղինակի՝ Խաչատուր Աբովյանի ժողովրդայնությունն ու փառքը: